

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻ

# ՄԵԼԿ

Տարեկան գինը 5 ռուբլ, կէս տարվանը 3 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Մատուրեանի և Արախանեանի խանութում:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի  
Դիֆուս. Редакция „Мелк“,

## ՄԵԼԿ

ԼՐԱԿՈՒՐ

կը հրատարակվի եկող 1877 թվից  
չաբաթը երկու անգամ: Տարեկան  
գինը 7 ռուբլ, կէս տարվանը 4 ռուբլ:

## ՊԵՊՈ

ԿՕՄԵԴԻԱ, ԵՐԵՎԱՆ, ԱՐԱՐՈՒՄԱՇՈՎ

Հեղինակութիւն

Գ. ՍՈՒՆԻՔԻՆԻՅԱՆՑԻ

Ծախում է թիւ 3-ը: Մշակող լրագրի խմբագրատան մէջ և պ. Զաքարիա Գրիգորեանցի գրախանութում:

Այս տեղերից պէտք է դիմել Հետեւեալ հասցեով՝ ВЪ Типографіи Кавказскаго книжнаго торговаго И. Григурова и К-о, աւելացնելով գրքի գինն 5 կոպ. ճանապարհի ծախս:

ԲՈՎԱՆԳԱՎՈՐՈՒՄ

Ծանոթութիւն. — Երբ ինչ տեսութիւն: Թիւրքիայի հայ գաղթականները: Նամակ Մոսկովայից: Ներքին լուրեր: — Արտաքին տեսութիւն: Թիւրքիա: Վանի հրդեհը: Նամակ Գերմանիայից: Նամակ Կ. Պոլսից: Նամակ Խմբագրի: — Յայտարարութիւններ: — Բանասիրական: Նամակներ իմ բարեկամին:

ԾՆՈՂՆԵՐԻՆ

Յօդուածին վերնագիրը ինքն իրան որոշում է, թէ իմ խօսակցութեան մէջ ում հետ ես գործ կունենամ: Որոնց միայն նիւ-

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ԻՄ ԲԱՐԵԿԱՄԻՆ

II \*

Աշխուշ ընկեր,

Ես չարժանաւոր եմ նամակներս:—Այդպէս երբեք ամէն էլ չէր անցնի Թիֆլիսի համալսարանը, որ իմ ազգականների ու բարեկամների կարօտը առնելուց յետոյ, չը գիտէր ինչու, արդէն ես ինձ տխուր ու տրտում էի դնում: Քաղաքիս հասարակական հինգ կեանքի անհամ երեւոյթները իրանց ազնիւ անշարժ ու անկիրթ տեսքերով ամէն կողմը հետեւում էին ինձ:

Առանց հայրենիքի, առանց հասարակութեան մարդս իրաւունք չունի ապրելու: Ինչ եմ ասում, նա մարդ է՝ որ եթէ ոչ գործով, գոնէ ոգով, սրտով չէ պատրաստուում իր հայրենի աշխարհում յայտնուող վատ, վնասակար երեւոյթների դէմ: Բայց ընդհանրապէս, պատերազմը լինում է խմբովին: Բայց կուռղի խելացի համբերութիւնը պատկերում է, եթէ ոչ կատարեալ յաղթութեամբ, գոնէ հաւանական կողմի զինուորական: Մի համանման նըշող այստեղի հասարակական հորիզոնի վրա դեռ ես չեմ երևում: Հասարակութեան սպէս յամառութիւնը սարսափելի է: Բաւական է այդ լուսաւորեալ կարծած մարդիկ իրանց վարմունքով նըպաստում են հասարակական ցաւերի արմատանալուն: Սակայն երբեք չը պէտք է յուսահատութիւն: Ընդհակառակ, հարկաւոր է անպատճառ քաջութիւն ու վէհանքութիւն մինչև վերջին սուրբ շունչը պատերազմելու: Հեռանքը անշուշտ գեղեցիկ կը լինի...

Բայց թողնենք փիլիսոփայութիւնը:

Հէնց այդ ժամանակներին մի տեսակ անորոշ

\*) Տես «Մշակ» № 45

Թախան յաջող կեցութեան շարժումներն են հաճելի, թե՛ նորա մեծեւն իմ խօսքերը, որ բոլորում են ինչպէս մեր երեսանների համար ունեցած ընդհանուր բարի ցանկութիւնից, նոյնպէս և իմ ծանօթութիւնից այն գործի հետ, որի մասին մի փոքր ներքեւ կը խօսեմ: Եւ փոխանակ խօսքս սովորական կերպով երկարացնելու, որ կարծես անհրաժեշտ է համարվում որպէս յորուածի առաջաբան, կը սկսեմ ուղղակի գործից:

Մեր թէ՛ արական և թէ՛ իգական դպրոցներում աւանդելի առարկաները երկուսի են բաժանվում՝ պարտաւորեալ և կամուր: Անկասկած կամուր առարկաներին մի դառը բաղդ է վեճակվում, և միայն բացառական հանգամանքներում դոցա ընթացքը կարող է յաջողված լինել: Ահա այդ կարգից են հայոց, վրաց, գերմանական լեզուները և մի քանի տեղերում Ֆրանսիականն էլ: Իմ նպատակն է խօսել հայոց լեզուի դաստիարակութեան վրա: Բայց ինչ որ կասեմ դորա մասին հաւաստաբալէս վերաբերում է և մեր տեղական միւս լեզուին՝ վրացերէնին: Ի՞նչու են կաղում տեղական լեզուները մեր դպրոցներում:

Այս հարցին պատասխանելու համար պէտք է մի կողմից մեր սեպհական անձնաւորութիւնների ու մեր երեսանների վրա խօսել, իսկ միւս կողմից ուսուցիչների ու դրպրոցական վարչութիւնների վրա:

Մեր մէջ խիստ քիչ կը գտնվեն այնպիսի անձներ, որոնք խորին կերպով համոզուած լինեն մայրենի լեզուի անհրաժեշտութեան մասին՝ անձներ, որոնք այս առարկան ուրիշ աւանդելի առարկաների հետ հաւաստաբալէս դաստարակելով, չեն ցածաճնում մայրենի լե-

զայներով ման էի գալիս ես այս օրհնուած Թիֆլիս քաղաքում և ինձ դառնցնող մի բան էի փնտռում: Մի օր յանկարծ նկատում եմ մի տան պատի վրա կպած թուղթ, որ յայտնում է հայոց թատրոնի ներկայացումը:—Երեկոյեան մութը կուխեց և ես մտայ թատրոնի դահլիճը: Վարպետը բարձրացաւ, ցածրացաւ, դարձեալ բարձրացաւ և անհմտ գործողութեան ժամանակ երկու երիտաւորը մարդ՝ օրիորդ ու պատանի, ուղում են սիրահարների դերեր կատարել: Կարճ ատեն, ուղում են սիրահարվել: Բայց հի, որքան դժուարացան խեղճ երիտաւորները: Նոցա թէքը կարծում էին և իրանք, զուցէ ամօթից ստիպուած, համարեն էլ ոչինչ չէին կարողանում արտասանել: Ի՞նչ երիտաւորներ, միթէ այդպէս դժուար է սիրահարութիւնը և այն էլ ձեր թարմ հասակում:— Բայց չէ, ես մոռանում եմ ֆրանսիական այն ճըշմարիտ առածը, թէ «La critique est facile, mais l'art est difficile» —քննութիւնը հեշտ է, բայց արհեստը դժուար:—Կարելի է որ ես ինքս էլ այդ միջոցին չը կարողանայի սիրաբաղվել թէ՛ և քննութեան տակ եմ գցում նրանց: Սակայն, չը գիտեմ, սիրահարութիւնը միայն Թիֆլիսի թատրոնի բեմի վրա է դժուար, թէ ընդհանրապէս այստեղի հայ հասարակութեան մէջ էլ այդպէս է: Թատրոնը միշտ ու ամէն ժամանակ թարգման է եղել և կը լինի մի օր և է երկրի հասարակական կեանքի:—Նա է լաւ, տաղանդաւոր գերասանը, որ ներկայացնում է նոյն իսկ հասարակութեան ինքնուրոյն բնաւորութիւնները: Եթէ իսկական կեանքում սեր չկայ՝ դերասանները ինչպէս ներկայացնեն: Չէ որ նրանք էլ հէնց այդ հասարակութեան կեանքով ապրող անդամներ են: Կարծեմ, դերասանների միջոց է, եթէ Թիֆլիսի հայոց թատրոնը չարունակում է մեծած գրութեան մէջ լինել: Այնպէս իսկ քաղաքիս անցգալ հասարակութեան մեղն է եղել: Խօսքս սիրով վրա է և չեմ ուղում լռել: Ինչ սեր և ինչպէս կարող է բնակվել, թարգմտել այնտեղ, ուր հասարակական իւրաքանչիւր քայլափո-

զուի յարգը երեսանների աչքերում: Շատ անգամ մենք ոչ թէ միայն չենք խանգարում երեսանների սերը դէպի մայրենի լեզու, այլ և աշխատում ենք յայտնել դորա մասին մի այնպիսի արհամարհանք, որ երեսանները կորցնում են ամեն տեսակ հետաքրքրութիւն ու հրապուրանք, և առաջնորդվելով ընտանիքից ստացած համակրութիւններով՝ օտարանում են իրանց մայրենի լեզուից: Մենք տեսնում ենք, որքան ընդունակ է մանուկը հեշտութեամբ սովորել օտար լեզուներ, ուրեմն որքան աւելի շուտ կը կարողանար նա սեպհականացնել իրան մանաւանդ իր լեզուն, որին բնականապէս ամենից աւելի ձգտում է նա և որի հետ կապուած է թէ՛ նիւթապէս և թէ՛ հոգեպէս:

Ապացուցված է, որ մարկային բնութեան ամենագեղեցիկ շարժումները կարելի է փչացնել և բոլորովին ունչացնել նոյնպէս և երեսայի ձգտումը դէպի հայրենականը, դէպի մեծաւորը, եթէ ծնողները ոչ թէ միայն անուշադրութեամբ, այլ և յայտնի արհամարհանքով կը վարվեն այդ բանի հետ:

—«Հայր (կամ մայր), ասում է երեսան, ես կը պարապեմ հայոց լեզուով կը վճարէք դասերիս համար»:—«Ի՞նչ յիմարութիւններ ես դուքս տալիս գլխիցդ, պատասխանում է լուսաւորված հայրը կամ մայրը, ուղում ես ժամանակդ անմեղ կորցնել: Դու աւելի լաւ կանես, որ ծանր կերպով պարապես րուսերէնով և ֆրանսերէնով էլ, որպէս զի անկիրթ չանուանեն քեզ: Հիմա մինչև անգամ գործակատարներն ու աղախիններն էլ են խօսում այդ լեզուներով»:

Միթէ քիչ են մերժելու պատճառները: Հայերէնի համար վճարելու միջոց չունեն

խում դանազան հրէական հայիւներ իրանց ստոր կերպարանքով առաջ են դալիս օրը ցերեկով: Ասոր պատկերում է մի երիտաւորը տղամարդ, էրուց մի ջահէլ աղլակ հարսանիք է և անշուշտ սիրով հետեւանք չը կայ այս բանում: Այստեղ բոլորը, բոլորը հայուած, կչած, վաճառած երեւոյթներ են: Մի մարդ ամուսնանում է մի հարուստ կնոջ հետ, որովհետեւ իր համար ստոր հայրենիք ունի: Մի կին ուղում է կապվել մի ունեւորի հետ, որովհետեւ սա էլ նոյնպէս իր կանացի գլխում հայիւների ունի: Այս մի քաղաքակրթութեան ստիպովաճառութիւն է: Աւելացրու այս երեւոյթի վրա և ծնողների ամեն տեսակ բռնակալութիւն, ճնշում իրանց զաւակների վրա և անհմտ սիրելի ընկեր, այստեղի հասարակութեան մէջ թաղաւորող սիրոյ պատկերը իր օտարոտի գեղեցկութեամբ: Արդեօք յարմար է ամուսնական միութիւնը, արդեօք յարմարվում են միմեանց հարսի ու փեսայի սրտերը, երկու կողմից էլ կայ արդեօք այն ներքին համաձայնութեան զգացմունքը, որին անուանում են սիրոյ արձագանքը, սրտի կայծ մի հարցման, սիրելի, այդ բոլորը: Բաւական է որ քաջանաւ կարգալ գլխներին աւանդած սրբազան օրհնութիւնը... Եւ եթէ մարդիկ իրանց կեանքի մեծ աշխարհ մտնելու, պատուական ընտանիքի հայր՝ կատարեալ մարդ դառնալու մէջ այդպիսի ստոր վարմունքներ են ցոյց տալիս, երեսակալի ուրեմն, թէ ինչ կերպարանք կունենան դոցա կեանքի փոքր, առօրեայ երեւոյթները:

Քաղաքիս հասարակական նեղ սեղմված կեանքի տեղից պատկերները, իմ տխրութիւնն ու տրտումութիւնը կարծես բաւական չէին ամառն էլ վրա հասաւ և բերեց իր հետ անտանկի, տաք չոգրը: Թիֆլիսի գլաւ հասարակութիւնը սովորական ժամանակից առաջ թողեց քաղաքը և նաղկով հեռանալով այրող տոթից ապաստան դառաւ ամառանոցներում: Կիլիկի արեւ աստուծոմ ամէն օր դուրս էր գալիս իր բնից, կանգնում էր այս մեռած մայրաքաղաքի գլխին և ամէն բան տաքաց-

վճարում են արդէն ֆրանսիական լեզուի համար: Վերջապէս երեսան էլ շատ դասեր պատրաստելով յօգնում է. ի՞նչ անել, որ առարկան ջնջել ցուցակից:—Ահա հայոց լեզուն, ի՞նչ օգուտ կայ դորանից: Փոյթ չէ դորա չը գիտենալը, «Եօլայ» կերթան: Գուցէ երեսան մի երկու անգամ դարձեալ խնդրէ իր ծնողներից և վերջապէս կը հրաժարվի ինքը իր դիտաւորութիւնից: Լաւ է էլի, զեպք մուկը աւելի քիչ կունենայ: Կը դառնի և այնպիսի աշակերտ կամ աշակերտուհի, որ առանց իմացանելու իր ծնողներին, ինքը կը վճռէ ներկայանալ ուսուցչին յայտնելու իր հրաժարականը պարապելուց:

Մորանից յետոյ միթէ կարող էք դուք դանդաղել թէ արժանի յարգանք չէ ցոյց տրվում մեր ազգին, լեզուին ու դաստիարակութեանը: Թէ մի անձնաւորութիւն և թէ մի ազգ ամենից առաջ ինքը իրան պէտք է յարգէ, որ կարողանայ ուրիշների յարգանքին էլ արժանանալ: Հակառակ դէպքում նա չունի իրաւունք յարգանք պահանջելու: Միծաղել է այն մարդը, որ իրաւունք է յայտնում իրան չը պատկանած յարգանքին արժանանալու:

Ուրեմն միթէ անմեղ չէք դանդաղում, թէ դպրոցական վարչութիւնները անուշադիր են իրանց աշակերտների մայրենի լեզուի ուսումնասիրութեանը: Գուք պահանջում էք ուշադրութիւն դէպի այն բանը, որին ինքներդ անուշադիր էք, դուք պահանջում էք յարգանք դէպի այն բանը, որին ինքներդ չէք յարգում: Եւ վերջապէս դպրոցական վարչութեան ուշադրութիւնը այդ բանում եթէ չէ գերազանցում ձեր ուշադրութիւնից, հաւաստաբալէս է: Նա աշխատում է դասա-

նում, չորացնում էր:—Փողոցները թողնա՛ մարդ չէր կարողանում չունչ քաշել: Նրապարանքները կեղտոտ՝ մարդ չէր կարողանում անցնել: Ինչ տեսակ հոտ անոս իւրաքանչիւր փողոցի բերանը բուրելով կարծես խունկ էր ծխում այստեղի հասարակութեան համար: Բարձրանում էր մարդ քաղաքիս չընկալ սարերի, քարափների վրա արմատով չորացած խոտերից աւելի ոչինչ չէր տեսնում: Ի՞նչու էր այդդ ծառերի ստուերի տակ ապաստանվում՝ այրող արևի ճառագայթները այնտեղ էլ էին թափանցում: Արդեօք մնաց մի բան որ այնպիսի կեանք ու ապրուստ տուղ է հեթանոսներից պաշտող աստուածը չը տաքացնէր:—Ոչ, ոչինչ չը մնաց, բայց քաղաքիս հայ հասարակութեան ստուած, մեռած կեանքից, որ կարծես յաւիտեան դատապարտուած է կենդանութիւն չունենալու:

Ահա այդ բոլոր անշուրտ ու անպիտան հանգամանքներից ստիպուած քաշուկի, հեռացալ մի փոքր ժամանակով քաղաքային խառը, զգուշիկ կեանքից դէպի գիւղական պարզ, անմեղ կեանքը, ուր գուցէ կարողնայի մոռացութեան տալ զուր խումս ծուղ հազար ու միկ պղտոր մտքերը: Մի փոքրիկ ճանապարհորդութիւն և ես կը հասնեմ նշանակած տեղս:

—Առաւօտեան կարմիր արեւը դեռ նոր էր պատուում հորիզոնի մոտակերը, որ լաւ քայլող գիւղական լըրենշալով մօտեցաւ Թիֆլիս քաղաքից դէպի արևելք գտնուող երկար դաշտին: Գետը, կուր գետը, որ քաղաքից սկսած ծով, դանդաղ և օժապտուտ, բայց զուգնթաց կերպով հետևում էր ինձ մինչև այնտեղ՝ գլուխը ծռեց և սկսեց անյայտանալ Ղաբանաղի հովիտների կողմը: Հնամապարհիս վրա երեւած բլրիկները քիչ առ քիչ մեծանում էին: Տօթիկ այրուած տեղ տեղ գտնուող դաշտի ծաղիկները ամբողջ գիւղեր զովանալով բաց էին աւան իրանց կոկիմի տերիկները և անմեղ կերպով սպասում էին էլի նորից խոնարկելու անգամ ճառագայթների առջև: Երկար ու կարծես անվերջ դաշտը դատարկ էր երևում: Բացի իմ ուրախ ու

տորել տեղական լեզուները միւս առարկաների հետ հաւասար: Ձր գիտեմ կարող է նա արդեօք պարտաւորեալ դարձնել, որ շատ և շատ լաւ կը լինէր, բայց նա գործում է իր կարողութեան չափ:

Գանք հիմայ այն բանին, թէ այդ բոլոր վերեւ յիշածների պատճառով ինչ է պատահում մի խղճմամբ ուսուցչի հետ: Ենթադրենք երեխաներ, որոնցում ծնվում է ցանկութիւն ծանօթանալու իրանց մայրենի լեզուի հետ և դաստաւութիւնը վաղ թէ ուշ իր ժամանակին է լինում: Ի՞նչու լաւ առաջ չը պիտի գնայ գործը: Կա՞ն, կը կրկնեմ ես հարցնելով և զարմանալով: Բայց դուք մեզ ապաք ընտանեկան հասկացողութիւնների ազդեցութիւնը երեխայի ուղեղի վրա, դուք մոռացաք, որ մայրենի լեզուն, որպէս առանձին լեզու առարկայ, երկրորդական տեղ է բռնում թէ տանը և թէ ուսուցմանը: Դուք մեզ ապաք, որ դա պարտաւորեալ չէ, որով և ծնողները իրանց կարգադրութեամբ կարող են երեխաներին երբեմն ուղարկել դասի և երբեմն չուղարկել: Դուք մոռացաք դորա պրօգրամի կատարեալ բացակայութիւնը քննութեան ժամանակ: Աչքի առջև ունեցէ՛ք այս բոլորը և համաձայնեցէ՛ք, որ դաստաւութիւնը հետ չէ, և թէ այդ առարկան շատ անկարմար դրութեան մէջ լինելով, անկարելի է որ խելացի կերպով առաջ տարվի:

Առարկայի պարտաւորեալ չը լինելը, պրօգրամի բացակայութիւնը, հարցաքննութեան կողմից անհասարակութիւնը միւս առարկաների հարցաքննութիւնների հետ՝ յոսանաւորութեամբ ծնեցնում են զանազան հասկացողութիւններ իւրաքանչիւր դասատուին: Մի բանիւր, պատահական ժամերը նուիրելով մայրենի լեզուին, դարձեալ պէտք է բաժանվեն, այնպէս որ համարեն թէ աշակերտների կամ աշակերտուհիների թիւի համեմատ էլ բաժանմունքներ պիտի կազմվեն դասատան մէջ: Վերջերք թէ կու՞զ մի այնպիսի օրինակ աշակերտը իր ծնողների կամքով առաջին և երկրորդ դաստաներում չէ պարապում մայրենի լեզուով, միայն երրորդում՝ նա ցանկութիւն է յայտնում սկսելու: Անկասկած

այդպիսով նա խանգարում է դասատան մէջ եղած ներդաշնակութիւնը, որի վրա ուսուցիչը երկար ժամանակ աշխատել էր: Իմ կարծիքով մերժելով մի անգամ յայտնի կամաւոր առարկաներ, էլ իրաւունք չը պէտք է ստանալ նրանց հետեւեալ դասատուներում լսելու: Կամ եթէ ոչ, իւրաքանչիւր դասատուներ իր պրօգրամը պիտի ունենայ: Այլապէս ուսուցիչը տաժանակիր աշխատող է, որ երկար չէ կարող մնալ իր գործին, և եթէ նա բարեխիղճ ու իր աշխատանքի որ և է հետեւանքին, բայց դրամական հետեւանքին, հասնող մարդ է՝ նորա հեռանալով մենք բոլորն քանքս կը կորցնենք մի անձն, որ կատարում էր մեր երեխաների առջև մեր սուրբ պարտականութիւնը:

Մայրենի լեզուով պարապելը չորրորդ դաստանն է վերջանում: Ցանկալի էր որ այդ դաստաններում երեխաները լեզուի հետ այնքան ծանօթանային, որ այդ գիտեցածը կարողանար ծառայել նոցա որպէս հիմք, ապաք զայն ծանր ուսուցմանը: Գուցէ և՛, որ այս մեր ամենի բնորոշութիւնը ցանկութիւնն է: Բայց դեռ պատահում է մեզ հաշտվել այն երեւոյթի հետ, որ երեխաները աւարտում են բոլորովին անգրագետ մայրենի լեզուից:

Արեւում եմ, այս բանում ամենից առաջ մեզաւորը մենք ինքներս ենք, իզուր երեխաների, ուսուցիչների կամ դպրոցական վարչաւորների վրա չը բարձնել մեղքը: Եթէ դուք ցանկանում էք, որ ձեր տղան կամ աղջիկը լսելով մայրենի լեզուի հնչեւը չը ցոյց տայ արհամարհական ժպիտ, ուրեմն երեխայութեան լեզուից թեւադրեցէ՛ք նորան սեր դէպք այդ պարտաւորեալ դարձեցէ՛ք դորա ուսուցմանը: Եթէ մի հոգի էր դորան փողկ կամ ժամանակի տեսեսութեանը, մի խօսքով վարվեցէ՛ք ձեր լեզուի հետ յարգանքով ու հարկաւոր ուշադրութեամբ, և տեսնողները ևս այդպէս կանեն:

Առաջը ասում է՝ Պատուիր դու քեզ և կը պատվեն ուրիշներինգ:

Մի հայտնի

տխուր, խառը մեղեդիի՝ աղամայ որդու ձայն չէր լսվում: Եւ եթէ ձուռ խրինջաւն ու փռնալը, անց ու դարձ անող ծիծեռնակների և ուրիշ թռչունների ձգվալը երբեմն երբեմն չընտանեւին դաշտի մեռելային խաղաղութիւնը ինձ կատարեալապէս կը տիրապետէր խորին լուսութիւնը: Աւելացրու որդւ վրա այս և այն կողմը երեւող քանդակներ, մենամտեցի, անտէր տեսնել էլ և կարող ես երևակայել, բարեկամ, այդ իմ փոքրիկ ճանապարհորդութեան տալաւորութիւնները: Փոքրիկ, որովհետեւ ընդամենը երեսուն վերստ ուղեւորվելով հասայ նուիրական գիւղը:

Ան ցածրանում եմ դէպի մի ձոր: Երկարաց, լսելով իրան ծանօթ զանազան ձայներ, սրում է ականջները: Գալիս են լաւ բարձրած սայլեր եղանակով և ծոյլ գոմէշներով լծած: Անտառում ու դաշտում մեծացած գիւղացի-սայլապաններից մէկը ճիպտոր ձեռքին աղատ ու ամենից երգում է խրախուսելով թէ իր ընկերներին և թէ մանաւանդ աշխատաւոր անտառներին: Նորա չեն անցնում առանց բարի ողջոյնը տալու պատանողին: Ես մտնում եմ գիւղ: Գա մի մեծ անտառային սարի ստորոտ է: Մի քանի խրինջներ, համարեն զետնի մակերեսից հաւասար տներ, գոմեր այս այն կողմը գրուած կազմում են այդ գիւղի բնակութիւնը: Բնակիչներին չուր տեղը կարկաշտաւոր առուակը գիւղի միջով անցնելով երկուսի է բաժանում նորան: Անտառի բարձր, ամենայնպէս տեղում չընտան է մի փառաւոր եկեղեցի ընդարձակ շքեղ տներով, որ մի յայտնի ու զօրաւոր ուսումնական լինելով ամեն կողմից գրաւում է դէպի իրան անթիւ ուսումնականը: Այդ գիւղիցի ու հիւանալի անտառը իր պողպատե վայրենի ծառերով, իր ահալի բարձր ու ցածր սարերով ու ձորերով, անդունդից լսվող չոր առուակի ձայներով ու իր դուրեկան օդով մի այնպիսի սիրուն մեծ ամառանոց է կազմում, որ իրաւ կարող է մի զօրաւոր ու շատերին հոգեպէս ունիւ-

թապէս բժշկող խաչի տեղ լինել: Ես թէ ևս ուսումնական չեմ, բայց այնտեղ էլ կերթամ, միայն դեռ մի օր ուղիւ եմ անցնել գիւղացիների հետ:

Այո, անցրի ես մի օր գիւղացիների հետ և աւիստս որ այնպէս շուտ հեռացայ: Ինչ գեղեցիկ, հանդարտ բնական կեանք: Ինչ պարզ ու անկեղծ յարաբերութիւններ: Բայց, թողնենք այդ բոլորը, ինչ անմասն սեր սիրահարների մէջ: Դաքաթ օր էր որ ես հասայ այնտեղ և երկուշիւսը բոլոր գիւղացիները միւս՝ կիրակի օրուայ, տօնի պատճառով աղատ էին հոգեւորից:

Մի տան գաւթում ժողոված էր մանաւանդ երիտասարդ մարդկանց բազմութիւն և ուշադրութեամբ ականջներն ու աչքերը մի կողմը օրած ու ուղղած ինչ որ լսում էին: Գիւղացին, որի տանը եւ հիւրասիրութիւն էր գտել, բաղաւորեց ինձ ներս մտնելով այդ գիւղական անշուշտ դարձալի գաւթում: Ինչ տեսայ: Դասած մի նիւար, սուր ու յարմար քիթ ունեցող, երկի զարդից հալած ու մաշտած երիտասարդ կին, գեղեցիկ հիւսած սեւ մազերը երկու ուսերի վրա գցուած, կրքոտ աչքերը ու սիրուց տանջուած արտապայտիչ դէմքը սորա, նորա վրա գցելով, երգում է զանազան ուրախ, տխուր սիրող երգեր: Դորան չըջապատել էին մանաւանդ օրիորդները և երկի ուղեւորով օգուտ քաղել ապագայ կեանքի համար երգչուհու բարակ ու նուրբ խօսքերից, մի տեսակ քաղել գուլ էին ցոյց տալիս իրանց կուսական ու անմեղ աչքերում: Երգչուհու ալ ու ձայն կողմը նշուած էին երկու անմասն սիրուհիներ: Մէկը երբեմն երբեմն իր գեղեցիկ բարի աչքերը թեքելով դէպի ընկեր-երգչուհու արտապայտու էր իր ժպիտով անխորհրդ, անկեղծ բարութիւն: Միւսը, որ անդադար նայում էր տանջող երգչուհու դէմքին և իր գիւղական, բայց փափուկ ձեռքերով ասես անհամբերութեամբ ուղում էր բռնել երգի խիտ, խիտ խօսքերը, իր արտաստաբանութեամբ պատկերաւոր գրչին արժանի երեսով ցոյց էր տալիս մի կանացի կենդանութիւն: Ան ապապէս երգչուհին

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԿԻՍՏԻ ՀԱՅ ԳԱՂՔԱԿԱՆՆԵՐԸ

Թիւրքիայի մէջ պատահած վերջին քաղաքական անցքերի շնորհով բազմաթիւ հայեր պիտու էին Թիւրքիայից գաղթել Ռուսաստան: Այդ գաղթողների մէջ եթէ կան զիւղացիներ, որոնք զետեղվում են անդրկովկասեան հարաւային մասում, մենք նրանց մասին մանրամասն տեղեկութիւն չունենք, այլ միայն լաւ ենք թէ բաւական շատ են ստում գաղթել:

Բայց Թիւրքիա, որպէս կովկասեան մայրաքաղաք, որպէս մեծ կենտրոն, գալիս են Թիւրքիայից թէ արուեստագործներ և թէ այն տեղի ուսումնական երիտասարդներ:

Պարզ է որ արուեստագործ իր կտոր հաց ձարելու համար կը շարունակէ այստեղ էլ իր ուսումնասիրած արուեստով պարապել: Բայց ի՞նչ պէտք է անէ երիտասարդը որ ոչինչ արուեստ չը գիտէ, որ Կ. Պոլսում կամ Թիւրքիայի ուրիշ մեծ քաղաքում եղած ժամանակ պարապում էր ուսուցչութեամբ, կամ գրականութեամբ: Թիւրքիա գալուս պէս այդ տեսակ երիտասարդը ինչ պիտի անէ՝ նա որոնում է իր համար դասեր և պիտու է դաստաւութեամբ պարապել: Հայոց ծխական դպրոցներում դասեր տալով, իր դասատուութեան համար այնքան չեն վարձ ստանալով որ կարող է վերջապէս քաղցած չը մեռնել:

Եւ ինչ էք կարծում, կարծում էք մենք օգնում ենք այդ խեղճերին: Ընդհակառակն մեր հայոց հոգեւոր իշխանութիւնը, տեսնելով որ այդ երիտասարդները իրանց համար սարքում են համեստ գործունեութեամբ, յանկարծ արգելում է նրանց դասատուութիւնն անել պատճառ բերելով, որ նոքա օտարահայտակ են: Ուրեմն մինչև որ Թիւրքիան հայերին ճշտում է, հպաճում է, բռնադատում է, նրանք փախչում են Ռուսաստան որ այդտեղ ապաստան գտնեն, և ի՞նչ են տեսնում: Նրանց հացը կտրողը հայոց հոգեւորականութիւնն է:

Եթէ այդ երիտասարդներին դասատուութեամբ պարապելու արգելման պատճառը այն է, որ նոքա չունեն ուսաց ուսումնականից ուսուցչութեան վկայական, այդ վկայականը չունեն և մեր ծխական դպրոցների ուսուցիչներն մեծ մասը, բայց հոգեւոր իշխանութիւնը և կառավարութիւնը համարում են այդ, գիտնալով որ մեզանում ուսուցիչների մեծ պակասութիւն կայ: Իսկ

կթէ պատճառը այն է, որ այդ երիտասարդները օտարահայտակ են, մենք չենք կարող չը գարմանալ որ մեր հոգեւոր իշխանութիւնը այդքան խիստ է, երբ որ ինքն կառավարութիւնը այդ կողմից շատ ներողամիտ է: Մենք կարող ենք ցոյց տալ շատ ներողամիտ օտարահայտակ ուսուցիչներ: Թէ ֆրանսիացի, թէ գերմանացի, թէ բելգիացի, թէ չեխացի, որոնք ոչ թէ միայն Թիւրքիայի մասնաւոր տներում և մասնաւոր ուսումնարաններում դաս են տալիս, բայց հաստատ ուղեւոր դասատուութիւն են անում մեր պետական գիմնազիալներում:

Ցանկալի է որ մեր հոգեւոր իշխանութիւնը այնքան ձեւապաշտ չը լինէր, և փոքր ինչ աւելի մարդասեր ոգով վերաբերվէր դէպի խեղճ հայ երիտասարդ գաղթականները, որոնք գաղթելով Ռուսաստանը համոզված են որ մեր տերութեան հովանաւորութեան տակ կը գտնեն իրանց համար հանգիստ կեանք և համեստ աշխատանքի միջոց:

Գ. Ա.

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՅԻՑ

Դեկտեմբերի 7-ին

Ինչպէս երևում է ձեր «Восточный Восток» քրօնիւրը տպագրութիւն գործից ուսաց լրագրութեան վրա, որովհետեւ զանազան լրագիրներ իրանց թերթերի մէջ յայտնում են տեղ տեղ այդ գրքոյկից քաղուած մտքերը, չը նայելով որ Ռուսաստանում առհասարակ շատ քիչ են ուղարկութիւն դարձնում որ և է քրօնիւր ասած գրքի մաս: Նորերում, օրինակ, «Петербургская газета» լրագիրը քաղուածներ անելով այդ քրօնիւրից և թարգմանելով «Восток» Թիւրքիայի մասին լուրեր, աւելացնում է՝ «Ստանից պարզ է, որ կոնֆերենցիայի խնդիրը անհամաձայն տեսլի դժուար է, քան թէ առաջին հայեցակէց երևում է: Նա պէտք է ոչ թէ միայն Օսմանեան պետութեան սլափօնական և յունական նահանգների վերանորոգութիւնների պրօէկտը վերաբնէ, բայց դուք պէտք է քննութեան տակ գցէ և Հայաստանի մէջ վերանորոգութիւնների հարցը»:

Առհասարակ այստեղ ամենքը դադարւած են արեւելեան հարցով, մեծից մինչև փոքրը, իշխանից մինչև վերջին ուսմիկը: Իսկ լրագիրները միմեանց նախանձու բամբասում են: Վարդ է որ պ. Կլարակի, «Годосъ» լրագրի խմբագիրը և պ. Պալէտիկա, «Биржевыя Ведомости» լրագրի խմբագիրը

Բացի գեղեցիկ շտկուած սպիտակ վրաններից, ուր սենեակ չը գտնողները ապաստարան էին գտել, մի քանիսը, մանաւանդ գիւղացի-ուսումնականները անտառի շուրջ տեղ գտնուած կանաչ գորգերի վրա էին հիւրասիրվել: Գիւղերը գերեզմանից աւելի դուրսնային էին: Լուսնից մի կողմից, իսկ վրանների ու սենեակների առջև չարուած լապտերները միւս կողմից էին լուսաւորում եկեղեցու անտառային գաւթը: Հրախաղութիւններ, երաժշտութիւններ, զանազան աղաղակներ միմեանքնում էին իրարու հետ և օդը թնդանելով զուարճալի և ուրախ տեսարան էին ստեղծում հանդիսականների համար:

Բայց մանաւանդ կարելի էր հիւանալ կէս օրի ժամանակ եկեղեցու գաւթում պատահող միմամարտութիւններով: Երկու «Բաշկէւան» միմամարտողներ հակառակ կողմերից դուրս էին գալիս կուռի ասպարէզ, և ուղ գիտէ ինչ զիջող ու նենայտ սրտերում, սկսում էին մարտնչել: Այդ «Բաշկէւաններից» մէկը բարձր, բայց ճարպիկ հասակով վէհանման դէմքով և բաց-սուր կուրծքով ու ջրոտ բազուկներով կարողանում էր ամենքին առանձին, առանձին յաղթել և գետնով տալ: Նորան խրախուսում էին չըջապատող ամբոխի աղաղակները և մանաւանդ զգուրանայինքի ու թմբուկահարների պատերազմական երաժշտութեան եղանակով:

Չանցաւ մի շաբաթ և ևս վերադարձայ էլի այս օրհնուած քաղաք, ուր այժմ էլ նստած գրում եմ քեզ, սիրելի, այս խառը տողերը: Որքան կուզէ հեռու, հեռու թռչի, գնայ թռչունը իր բնից դարձաւ, եթէ գաղթող-թափառական չէ, հեռանալ չէ կարող: Ուր դնայ մարդը, որ իր ծննդեան տեղը, հայրենի աշխարհ ու կարօտ սիրելիներին չը մտաբերէ, ուր, ասա, խնդրեմ...

Քեզ սիրող Յարոյ

Թիւրքիա 76. դեկտեմբ. 25-ին

Յի չիպիս անգ











